ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան **11 հունիսի 2024թ.**

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝
- Ռոման Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝
- Դավիթ Մկրտումյան
- Արսեն Աբգարյան
- Սեյրան Սարգսյան

Քարտուղար՝ Լիլիթ Գևորգյան

Նիստի ընթացքում **«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների նախահաշվային գները:

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկություն eauction.armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
2. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:
3. Տվյալներ «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
4. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին:
5. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին:
6. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

1. Տեղեկություն eauction.armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:

1.1 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի մայիսի 21-ը ժամը 12^{00}-ը, հետադարձ աճուրդը կայացել է 2024 թվականի մայիսի 22-ը ժամը 12^{00}-ին:

1.2 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային eauction.armeps.am համակարգի միջոցով բացվել են սահմանված ժամկետում:

1.3 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է մասնակցության 3 հայտ: Սահմանված կարգով ներկայացված հայտերը ընդունվել են eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի, իսկ «Ֆուտբոլային դարբնոց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով մերժվել է, քանի որ ներկայացված գնային առաջարկը (550,000,000.00 դրամ) գերազանցել է նախահաշվային գինը:

1.4 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

գ.	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցե
1	«Մուրան» ՍՊԸ	ք. Երևան, Աճառյան 42	Arman.tadevosyan@autogroup.am gellysales@autogroup.am
2	«Ավանտգարդ» ՍՊԸ	ք. Երևան, Գայի պողոտա 14/3	info@Avantgarde.am

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0:

2. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:

2.1 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի մասնակցի էլեկտրոնային հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Մուրան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.3 Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում կցված հղումը 2023 թվականի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումն է: Բացի այդ, «Մուրան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ պաշտոնական ներկայացուցիչ հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթը՝ փաստերի վերաբերյալ գրությունը, չի պարունակում ստորագրություն, կնիքը հավանաբար չիներեն լեզվով է և անհասկանալի, հետևաբար ներկայացված գրությունը չի կարող հանդիսանալ պաշտոնական ներկայացուցիչ հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթ (տվյալ փաստի վավերացումը հանդիսացող պաշտոնական գրություն):

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

***3.* «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի մասնակիցների առաջարկած գները.**

Հ/Հ	*Հբ. տեղ*	*Ներկայացված հայտեր*	*Նախ. գին*	*Գնային առաջարկ*		
				Արժեք	*ԱԱՀ*	*Գին*
1	*1*	*«Մուրան» ՍՊԸ*	*40 000 000*	*32 500 000*	*20%*	*39 000 000*
1	*2*	*«Ավանտգարդ» ՍՊԸ*	*40 000 000*	*33 333 333*	*20%*	*39 999 999,6*

4. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին:

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց.

4.1 Հաշվի առնելով սույն արձանագրության 2.1 կետը և հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 41-րդ կետը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ «Մուրան» ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները, հակառակ դեպքում մերժել վերը նշված մասնակցի հայտերը հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 42-րդ կետը:

4.2 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել «Ավանտգարդ» ՍՊԸ-ին և «Մուրան» ՍՊԸ-ին սույն որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

5. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին:

5.1 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել 11.06.2024թ:

6. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց.

- «Մուրան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան տեղեկությունները:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/11» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Մուրան» ՍՊԸ-ին:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:
- Հրավերով սահմանված ժամկետում 1-ին չափաբաժնով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Մուրան» ՍՊԸ-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝		Ռ. Արշակյան
հանձնաժողովի անդամներ՝		Դ. Մկրտումյան
		Ա. Աբգարյան
		Ս. Սարգսյան
հանձնաժողովի քարտուղար՝		Լ. Գևորգյան